

մասունք մաս կ ուրեմն պատրիք թէ եղ ուղարձան չ էն
ուր և յափառուց զարդ աշխատ ու ուղարձան չ էն զամանքից և
անքայ մէ յարտ և ՈւստիՄԵԱՍԽԲՈՒԹԻՒՆ (1) այս աշխատ մէ յարտ,

ուղարձ ու զամանքան չ էն յարտ և Զ. այսուհետ ու զամանքան չ
ուր ան շաբաթ գոյաց նույն ուղարձան հր անդեմ մը յարտ
չ պատրի մաս են առաջ առաջ ուղարձան հր անդեմ մը յարտ
ՄԱՐԴԲՈՒԹ ԾԱԿԱԼ. Ե. պատրի ուղարձան շաբաթ գոյաց նույն ու զամանքից և
Ա. գիրք գլ. 26. Եյս գլխում Խորենացին խօսումէ Արայի որդի
Արայ Արայեանի և սրա որդի Անուշաւանի վրայ Եյս գլխումն է յիշա-
տակւում Արմաւրի սօսիների պաշտամունքը Եյս գլխում աղբիւր
յիշուումէ հետեւալ բառերով «զորմէ (զԱրայեանն Արայէ) և մեռեալ
ասեն զնա ընդ Շամիրամայ ի պատերազմին Քայլ յարէ զկարգ
բանից զկնի այսորիկ օրինակ զայս Արայեանն Արա մեռանի ընդ Շամի-
րամից ի պատերազմի և Ասենը պարզ և ակներև է որ Մարարասին
չէ վերաբերում Յարէ Խօսքը Գարգաշը ընդլայնումէ Յարէ Մարա-
րաս բայց մենք դրան համաձայն չենք ա) այն պատճառով որ
Նախընթաց գլխում նոր աղբիւրներ են յիշուումն որոնց և պէտք է տրա-
մաբանօրէն վերաբերել այս «յարէն» այն է՝ «իմաստուն և քաջախոհակ
անձանց» ուրիշ խօսքով ասած համբաւներին և զրոյցներին բ) մենք
վերևում տեսանք որ Շամիրամի վերջին պատերազմը Զրագաշի հետ և
սրա փախուստն ու մահը առնուած չեն Մարարասից այլ վէպից ուստի
և այս մէջ բերուած հատուածները որովհետեւ վերաբերումն Շամիրա-
մին և նրա հետ միասին Արայ Արայեանի մահուանը ուստի և կարող
են առնուած լինել միմիայն վէպից Ապա ուրեմն և «յարէ» ասացուածը
պէտք է ընդլայնել «յարէ վէպն» կամ «յարէ զրոյցն կամ երգն վիպա-
սանաց կամ մի ուրիշ բան բայց ոչ երբէք Մարարաս Եյսպիսի անորոշ
ասցուածները «յարէ» ասէ և այլն կարող են վերաբերուիլ տրամարա-
նօրէն դատելով միմիայն ան մի ջապէս ու նախընթաց աղբիւ-
րին Եթէ մենք խօսումն կարապետի վրայ և յետոյ անցնումն ք
Մարկոսին և առանց անուն տալու ասումն պատրի ասէ գրէ յարէ այդ
ոչ մի գէպքում չէ կարող վերաբերուիլ Կարապետին այլ անընդիմիջա-
պէս նախընթաց Մարկոսին Քայլ եթէ ուզումն ք որ անպատճառ Կա-
րապետը հասկացուի և ոչ Մարկոսը պէտք է անպատճառ նորից կրկնենք
Կարապետի անունը կամ տիտղոսը կամ մակդիրը մի խօսքով մի այնպի-
սի բառ որով Կարապետն հասկացուի և ոչ Մարկոսը Մենք ներողու-
թիւն ենք խնդրում ընթերցողից այսպիսի տարրական շացատրութեանց

(1) ՏԵս ՊԱՐԱՐԱՏ ՀԱՅԻՒԹ

մէջ մտնելներուս համար՝ բայց այս անումբնք ստիպուած այն ահագին և ընդհանուր թիւրիմացութիւնից, որ մինչև ցայսօր շարունակել է գոյութիւն ունենալ Մարարասի ծաւալի մասին, որից և ծագել են բաղմաթիւ անտեղի եզրակացութիւններ:

Ճշմարտութիւնից շատ շեղուած չենք լինի եթէ ենթագրենք որ Խորենացին թերեւս զիտակցաբար գործ էր դուռմ այդպիսի անորոշ «ասէ» ներկամ «յարէներ, չհամարձակելով «ըստ իւր ուղղամտութեան» խարել և գրաւոր աղբիւր ցոյց տալ այն կէտերի համար, որոնց համար իսկապէս գրաւոր աղբիւր չուներ, միւս կողմից քաշւումէր յաճախակի հայկական վէպը կամ զրոյցները բացորոշակի հրապարակ հանել իւր և մի ակա աղբիւր, առանց գոնէ որ և է գրաւոր «հիման» վաւերացման, որն և ըստ իւր ժամանակի հայեցողութեան կարող էր վնասել իւր գրուածքի վարկին: Աւստի և ստիպուած բաւականանումէր անորոշ «ասէ» կամ «ասէն» երով, ուղիղ կամ սխալ հասկանալու մեղքն ու վարձքը թողնելով ընթերցողի շնչին: Մի բան միայն աներկբայելի է, որ Խորենացին՝ ամեն մի կէտում: Երբ գրաւոր որեւէ աղբիւրի վկայութիւն ուներ, այդ ոչ միայն չը պիտի ծածկէր կամ անորոշ թողնէր, այլ պիտի աճապարէր ամենայն արտօրանօք լիշել այդ աղբիւրը, որ և իսկապէս էլ արել է, իրրե աշխատական համարելով նաև ամենահեռաւոր ակնարկութիւնները, որոնք քիչ թէ շատ կարող էին առընչութիւն ունենալ իւր պատմածի հետ: Խորենացու ամենամեծ գանգատը իւր ամբողջ երկասիրութեան մէջ գրաւոր աղբիւրների, մատեանների պակասութեան մասին է:

Ա. Գիրք, գլ. 21, 22. Այս գլուխները նուիրուած են Պարոյրին և նրա յաջորդներին: 21-դ գլխում յիշումէ մի բոլորովին նոր աղբիւր: «վասն որոյ արժան է մեզ աստանօք մեծ գործ կատարել և բազում ասել առարկութիւնս ճառից, զորոց մեզ էն իսկ հիմունս այսպիսեաց բանից բնթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հագներգութիւնս զարդասաւորին ի բանս և զիմաստնոցն իսկ և զի մէջ իմաստնոցն իմաստնագունիք:

Ո՞վ է այս «իմաստունը» իմաստունների մէջ իմաստնագոյնը, որ չորս հագներգութեամբ մի գրուածք ուներ, որին Խորենացին այնչափ յարգում էր, որ նրա գիրքը կարդալը համարում էր մի «արժանիք»— արժանացնք անձամբ կարդալ նրա գիրքը, մի ասացուած, որ ենթագրում է յարդանքից աւելի մի բան: «Աեզնը», մի շատ թանկագին բառ է Խորենացի ուսումնասիրողին համար: Աւըեմն շատ աղբիւրներ ունի յիշած Խորենացին, որ «անձամբ» չէ կարդացել այլ որոնցից օգտուել է միջնորդաբար: Մենք գէպք ունեցանք այս մասին խօսելու «հաւ» և «համրաւ» ընթերցուածների առթով: Եւ իսկապէս՝ քննադատութիւնը ցոյց է տալիս

դրապէս՝ որ Խորենացու Ա. գրքի շատ աղբիւրները առնուած են միջ-
նօրդաբար՝ Եւսեբիոսից՝ և թէ Խորենացին չէ ունեցել իւր յի-
շած բազմաթիւ գրողների բուն մատեանները, և և Խորենացին այդ
չէ էլ ծածկում ինչպէս կարծուել է մինչև այժմն «Համբաւ» ըն-
թերցուածը, այս «մեզէնը» ապացոյց են այդ բանին:

Այս «չորս հագներգութիւնը» գրողի մաստունի գրուածքում Խորենացին
չէ կարդացելՊարոյր—Աարբակի բուն պատմութիւնը, այլ միայն չի մունք,
այսինքն այնպիսի մի բան՝ որ երաշխաւորում էր Պարոյր—Աարբակի
պատմական գոյութեանը: Հագներգութիւնը բառը Խորենացին գործ է
գնում՝ գրքի փոխանակ: 2օրս հագներգութիւնը պէտք է հասկանալ
մեր կարծիքով: ոչ որեւ բան աստեղ ծառ ութիւն ինչպէս հագներգու-
թիւն բառի արտաքին երևոյթը և սովորական կիրառութիւնն է ցոյց տալիս,
այլ լոկ—չորս գիրք կամ չորս հատոր: Խորենացին հագներգութիւնը բառը
գործ է գնում՝ նաև իւր պատմութիւններ և ան համար: Քայլց զի պատ-
մութեանց և ոչ գովեստից է ժամանակա, մանաւանդ զի և հագներգու-
թիւն սըստ իւրաքանչիւր պատմագրաց արտասանութեանց և ոչ
չատուկ ի մենջ շարագրեցաւ, անցցուք ի կարգ բանից՝ որ ինչ յաղագս
առար: (Բ. 92): Ուրեմն ով էր այս «չորս գրքով» կամ «չորս հատորով»
մատեանի հեղինակը: Թէ այդ Մարտասը չէր, այդ բոլորովին աներկրա-
յելի է: Եյստեղ խօսը նոր մինչև այժմն չյիշուած աղբիւրի վրայ է:
Մարտասը երբէք չէ արժանացել Խորենացուց իմաստունների մէջ իմաստ-
նագունիւ տիտղոսին: Մարտասի տիտղոսներն են «ծերունի» ուշիմ (որ Կա-
տարինայ բառի թարգմանութիւնն է) և բազմահմուտ: Խորենա-
ցին ածականներ շոայլող չէ, նրա ամեն մի բառը կշռած է: Աերջապէս
ոչ միտք չունի ասել՝ այն էլ հազիւ ուրեմն 22-ր գլուխ: Մարտա-
սի համար, թէ մենք (Խորենացի) մեզէն—անձամբ կարդացինք նրա գըր-
ուածքը, Մեր կարծիքով իմաստուն իմաստնագոյն բառերը բաւական
բնորշ են Խորենացու բերանում: Նրա համար իմաստուն են միայն
Յոյն երը. Պարսերը «իծուն են և անձոռնի», որեւէ քննադատութիւ-
նից իսկ սուրբ իսկ Հայերը «անբան են և թուլամիտ»: Յոյներն են միայն
մայր և գայեակ իմաստից: Ուստի և այս իմաստունների մէջ իմաստնա-
գոյնն էլ պէտք է յոյն լինի: Խորենացուն ծանօթ յոյն գրողներից երկուսը
միոյն մէծ հաւանականութիւն ունին իմաստնագունիւ տիտղոսին արժանա-
նալու Խորենացուց: Հերոդոտոս և Դիոգոր Սիկիլացին: Եյս վերջինին
մանաւանդ շատ է յարգում Խորենացին: Դիոգորին նա ծանօթ էր և
կարդացել էր երեխ ուսանողութեան ժամանակ, բայց պատմութիւնը
գրելիս իւր մօտը չունէր նրա գրուածքը, ապա թէ ոչ մտադիր էր իւր
ամբողջ Բ. գրքում նրանից օգտուել: Աչ հնախօսութիւնք եղեալ մերց

աշխարհին և ոչ ընդ ամենայն յունականսն անցանել ատակեալ՝ սակա կարծութեան ժամանակին, ուս և ոչ Պատեան ագրութիւնք (1). Դիսո գորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանեաք ընդ բնաւն, զի մի ինչ ի մէնջ մնացէ ի գլխաւորացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոյ շարագրութեանց» (Պ. 1):

Եյդ «չորս հատորով» մատեանի անծանօթ հեղինակին Խորենացին կուտամբ նաև «արգասաւոր ի բանս» որ չէ նշանակում ճարապախոս մեջօղուն, ինչպէս հասկացել է Լանդլուան (Յոլ. I. թ. 32.), այլ արդիւնաւէտ գրող, շատ գլքեց գրող, որն և շատ յարմար է գալիս Դիսոգորին. որի «Պատմական Մատենագարանն կամ Մատենագրութիւնք» գրուածքը բաղկացած էր 40 գլքից, Մատենագրութիւնքը. յայտնի էին Խորենացուն և թերեւս, ինչպէս որ Խորենացու և ահատոր պատմութիւնը (մի) հագներգութիւնն է կոչւում; այսպէս և Դիսոգորի քառասուն գիրքը արօհուած լիներ կ հատորի կամ հագներգութեան: Դիսոգորի պատմութիւնը խօսումէր աշխարհի բոլոր ազգերի վրայ ահագին գրուածք էր 30 տարուայ աշխատութիւն, և մեզ հասած մասերումն էլ գանումնենք Արբակի կամ Աարբակի յիշատակութիւնը: Հաւանական է որ Դիսոգորի կորած մասերումն էլ չկար Պարոյրի որեւէ յիշատակութիւն, բայց Խորենացին այդ չէ էլ պնդում: Իւ մենք տեսանք թէ Խորենացին ինչպիսի զգուշութեամբ է դորձ ածում այդ յականէ յանուանէ չյիշուած հեղինակի վկայութիւնը, կոչելով այդ «հիմննեք»: Բայց ինչո՞ւ համար չէ տամիս հեղինակի անունը՝ արդեօք ծածկելու համար: Մենք այդ չենք կարծում: Հեղինակի անուան չյիշատակիլը՝ մեր կարծիքով այս գեղաքում կարելի է բացատրել՝ այդ հեղինակի յայտնիութեամբ: Հոշակաւոր լինելովք: Միջին գարերում Magister նշանակում էր Արիստոտելլ: Թերեւս Խորենացու ժամանակ Աղեքսանդրեան դպրոցում պատմիների մէջ «արգասաւորը» և «իմաստնագոյնը», համարւումէր Սիկիլացին, որից իսկ որ օգտուել են բազմաթիւ յետագայ դրօղներ: Այսպիսի մի լուսութեամբ ծածկուած է մնացել մեզ համար մի ուրիշ անձնաւորութեան անուն, որը նշանաւոր էր լինելու հիմքերորդ գարի ռւսումնական հայերի համար: Խօսքերս Խորենացու վարժապետի վրայ է: որին կոչում է մեր պատմահայրը՝ Խօսքատուն նրան նորիքելով իւր գ. գլքի 62 դլուխը: բայց մոռանալով թողնել մեզ նրա բուն անունը — այլ ուսանել զզօրութիւնս պէտ իմաստից ի նոր Պատմունէն: Սիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան 2) դտայ աշակերտ և ոչ անկատար վարժմամբ յանգեալ արուես-

⁽¹⁾ Առաջարկում եմ այս «Մատենագրութիւնք» բառը գլխատառով գրել, որովհետեւ ըստ իս այդ Դիսոգորի երկասիրութեան անուանակցութիւնն է:

⁽²⁾ Կայ երկու ընթերցուած՝ «արժան, և անարժան»: Մինչեւ այժմն նախապատառ թիւն է տրուած՝ արժան, ընթերցուածին: — ոչ արժան դտայ աշակերտ: բայց մեր կար-

այց ինքնացայ ։ Անշուշտ այսաեղ արգէն խօսք չէ կարող լինել փիլհոսիայ վարդապետի անունը գետակցարար ծածկելու մասին։ Պէտք է ասել, որ մեր հին գրողները ընդհանրապէս ժլատ են իրենց անունները յիշելիս կամ իրենց մասին տեղեկութիւններ հաղորդելում։ Աչ Խորենացու և ոչ էլ Սահակ Բագրատունու անունը կայ պատմութեան ամբողջ երեք գրքերում։ Եթէ չհաշուենք Ա. գիրք, 1. գլխի և Գ. գիրք, վերջին գլխի վերաբութիւնները ։

Եւ այս ամենից յետոյ, մարդ ապշած է մնում, երբ տեսնումէ, որ Էմինը կամենալով որոշել, «չորս հազներգութիւն» գրող մատենագրի անունը, ոչ միայն առանց որեւէ հիման համարում է նրան Մարաբասը, այլ և իւր այդ բոլորովին անձնական կարծիքը, առանց գոնէ որեւէ ծանօթութեամբ նախազգուշացնելու ընթերցողին, մոցնումէ բ ն ա գ ր ի մէջ (Պուտսեր. թարգ. գլ. 21), այնպէս որ ընթերցողը ստիպուած է աներկրայաբար համոզուած լինելու, որ իսկապէս Խորենացու Ա. գրքի այդ բոլոր գլուխները Մարաբասիցն են քաղուած և թէ Խորենացին ան հ ր ա-ժ է շ տ է համարել հաւատացնել մեզ, որ ինքն ան ձ ա մ բ կարդացել է Մարաբասը։

Եյդ անհիմն և վայր ի վերոյ կարծեաց նախապաշարող ուժն այնչափ զօրեղ է, որ Խորենացու հմուտ և սրամիտ քննադատն անգամ՝ Գուտըշմիդ չէ կարողացել խուսափել այս թակարդից և խելօք աղուէսի նման երկու ոտքով է բռնուել։ Նա թէև Մարաբասի գիրքը Խորենացու հնարածն է համարում։ այսուամենայնիւ Էմինի նման։ այս 21-դ գլխում յիշուած «իմաստուններից իմաստնագոյնը» Մարաբասն է կարծում և մինչեւ անգամ անհնարին չէ համարում մի համեմատութիւն անցկացնել այդ «իմաստնագոյն Մարաբասի» չորս հազներգութիւնների և Խորենացու չորս գրքերի միջև ։)։ Մենք արգէն տեսանք Խորենացու Զորորդ գրքի

ծեփով այդ սխալ է։ ուղիղն է՝ «անարժան»։ Մեր այս կարծեաց նպաստաւոր է անընդմիջապէս հետեւող ասացուածք՝ «Եւ ոչ ան կատար վարժումներ»։ որն աներկրայաբար հնթագրում է «անարժան»։ Խորենացու միտքն այն է։ Քմբ վարժապետիս որ ժանաւոր աշակերտ եղայ եւ կ ա տ ա ր ե ա լ վարժութեամբ նրա աւանդած արուեստը խրացրի։ Լւ ընդհանրապէս ասած։ Խորենացին ազատ է կերծ համեստութիւնից։ Նա նմանակէս որ չէ ծածկում իւր կարծիքը ու բիշների մասին։ նոյնակէս եւ չէ ծածկում իւր կարծիքը իւր մասսին։ Այսպէս մի տեղ ցոյց է տալիս նա որ մասամբ ինչ ինքն առելի գիտէր։ քան իւր վարդապետը՝ Սահակ Պարթեւը, «Ո՞վ այսուհետեւ զմերս յարդեցէ զուումն»։ ո՞վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս։ ո՞վ գհայրական բարբառեցի զուարձութիւն։ մտսամբ ինչ յաղթահար եւալ յորդւու» (Գ. 68)։

4) Ueber die Glaubwürdigkeit der Armenischen Geschichte der Moses von Khoren, von Gutschmid, եր. 32:

առասպելի արժէքը, 1881-ին Էմինը փոխեց իւր կարծիքը՝ ընկնելով ուրիշ ծայրաշեղութեան մէջ։ Եյս անգամ՝ «Չորս հազներգութիւնը» համարումէ նա հայ կա կան աղբիւր, Խորենացուց առաջ գոյութիւն ունեցող պատմութիւն։ Եյս կարծիքն արդէն այնչափ անհիմն, ասենք բառը, անհեթեթէ, որ չարժէ անգամ հերքելլը։ Քաւական է միայն կարդալ Խորենացու Ա. գիրք՝ Զ գլուխը՝ «Յազագս անհմաստասէք բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց», որ ամեն կարծիք փարատուի !)։

Եյս 21-ր գլուխում Աարբակի պատմութեան մասին կայ և մի այսպիսի նկատողութիւն։ Եյլ այս եթէ առ այլս այլաւ զգաբար պատմին մի ինչ պանչանար։ Եթէ այս պատմութիւնը ուրիշներից՝ ուրիշ տեսակէ պատմում։ Բնաւ մի զարմանար։ Ուրեմն Խորենացին չէ ուրանում, որ ուրիշ պատմիչների մօտ, օրինակի համար՝ Դիոդորոս Սիկիլացու կամ Հերոդոտոսի մօտ այլ տեռուակէ պատմում։ Պարսյրը չէ յիշւում։ Եւ այս բացատրումէ Խորենացին մեր նախնիների անուռառումն ասիրութեամբ։ որ իւր ժամանակին գրի չառան Հայոց պատմութիւնը՝ ինչպէս այդ մասին արդէն երկարօրէն խօսել էր Խորենացին առաջ էլ (Ա, 3)։

Աերջապէս, Խորենացին հարցնումէ. «Ապա եթէ ասիցեն, ուստի մեզ և զնախնեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործուասեմ։ ի հնոցն գիւանաց Քաղդեացւոց, Ասորեստանեաց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոց ի քարտէս արքունիքի իր գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոց անէ կացելոց և մեծաց կողմնակալաց։ Առ երեսյթս այնպէս է թւում թէ Խորենացին պարզ ասումէ. որ հայ նահապետների երկարցանկը՝ Անուշաւանից սկսած, ինքն անձամբ քաղել է Քաղդեացիների Ասորեստանցիների և Պարսերի հին գիւաններից, մի բան, որ ամեն կերպով մեզ իրաւամբ բոլորովին անիրագործելի և անհաւատալի է թւում։ Բայց Խորենացու այդ անհաւատալի ասութեան հաւանական բացատրութիւնը հէնց իւր կողքին է. — նախարարների և նահապետների անունները մտած էին արքունիք քարտէսի մէջ, իրեւ կողմնակալների, վերակացուների և գործակալների անուններ։ այլ խօսքով ասած, ամեն մի հզօր նախարարութիւն իւր աւանդութիւններով կապուած էր զրացի որևէ հզօր տէրութեան հետ՝ ինչպէս Արծրունիները Ասորեստանցիների հետ։ Եւ մենք հաստատ գիտենք Խորենացուց, որ այդ նախարարական տները ան-

) Էմինի այս կարծիքն էլ ինքնուրոյն չէ, այլ փոխառնովի. տեսա Collections, t. I, p. 32, և Մոնսե Խօրենսկի և Դրեվ. Էպօչ Արմ. 1881. էր. 15.

թիւ մատեաններ ունեին օտար լեզուներով կամ՝ թերեւ՝ օտար լեզուի տառերով գրուած, մասնաւորապէս իրենց սեպուհութեան և պայտագատութեանը վերաբերեալ (Ա, 3): Այդ մատեանների զրոյցների հետքերը մնացել են մեր հին մատենագրութեան մէջ (օրինակ՝ Արծրունեաց Հաղամակերտի առասպելը, ևայլն): Մենք գիտենք նաև, որ իւրաքանչիւր աղնուական տան՝ այդպիսի յուշարձանները պէտք է ըստ կարելոյն աւելի մեծ հնութիւն վերագրեին, հասցնելով նրանց ծագումը մինչև քաղդեացիները և գեռ աւելի ել հեռու: (Արծրունիների ծագման մասին խօսելիս մենք գէպք կունենանք այս կէտն աւելի շեշտելու): Այնպէս որ՝ Խորենացին ճշմարտութիւնից շատ հեռու չէր լինի, իւր՝ նախարարական աների զրոյցներից հաւաքած տեղեկութիւնները վերագրելով Պարսերի, Ասորեստանի և Քաղդեացիների գիւաններին, Գոնէ, աներկրայելի է, որ նախարարական աւանդութիւնները շատ հին լինելու յաւակնութիւն պիտի ունենային, ինչպէս այդ յատուկ է բոլոր ազնուական տոհմերի աւանդութեանց:

Այսպէս կամ այնպէս մի բան միայն որ ոչ մի կասկած չի վերցնի և այդ այն է, որ այս յառաջ բերուածքունու աղբիւ ընդհանուր չունին Մարտրապահի հետո:

Սակայն 22-ր գլուխում: մի կէտում որ չէ վերաբերում ոչ Պարոյրին և ոչ էլ Նրա յաջորդներին, մի անկախ յաւելուածում: կայ մի վկայութիւն «պատմագրից»—Մարաբասից: Մենք տեսանք արդէն որ «պատմագրիրը» Մարաբասի յատուկ տիտղոսն է. «որպէս ցուցանէ նոյն պատմագիր» նոյն ինքն պատմագիրն, ևայլն» (Ա, 13): Այս այդ հատուածը՝ Հրաչեայ սա կոչն՝ վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ (): Առ սովաւ ասեն (ոչ Մարաբաս) կեցեալ զնաբուգոդոնոսոր

) Վեհետիկան վերջին տապագրի մէջ այս նախադասութիւնը գրուած է մի միջակ առ ով Հրաչեայից յետոյ պասպէս, «Հրաչեայ սա կոչի, եւայլն»: Մեր կարծիքով այդ միջակեաը ոչ միայն զորքի է որեւէ իմաստից, այլ եւ աղջատում է ասացուածը: Խորենացին ուղում է ասել. «Սա կոչի Հրաչեայ վասն պայծառերես եւ բոցակնագոյն իմն լինելոյ եւայլն»: Առ այս պարբերութիւնը մինչեւ գլուխ վերջը մի ժանօթութիւն է վեհետիկան վանկի Հրաչեայ անուանը: Խակ այս պարբերութեան նախընթաց պարբերութիւնը—«Քանզի եւ վերջին Երուանդում... զանուանս զայսոսկի»—մի սրիշ ծանօթութիւն է Երուանդ. Ակաւակեայ եւ Տիգրան անուաններին վերաբերեալ: Այսպիսի ծանօթութիւնները ձեռագրերի մէջ գրուում են անուանական ցանկից դուրս: առանձին նշանով կամ աստղանիշով: Մեր կարծիքով այս երկու ծանօթութիւն—պարբերութիւնները իրենց ունիզերը շփոթել են: յետ ու առաջ ընկնելով: Կամ պէտք է այժմեան տպագրի (Վեհետիկան վերջ, Հրաչ.) կարգաւորութիւնը պահելով «Հրաչեայ սա կոչի» պարբերութեան սկզբին մի աստղանիշը դնել եւ մի աստղանիշը էլ Պարոյրեան ցանկի Հրաչեայ մօտ, ցոյց սկզբին մի աստղանիշը դնել եւ մի աստղանիշը էլ Պարոյրեան ցանկի Հրաչեայ մօտ, ցոյց սկզբով այդ երկուսի առնչութիւնը, եւ ամբողջ պարբերութիւնը նկատել ընագրեց դուրս իբրեւ ծանօթութիւն: կամ, որ աւելի խելացի կլիմ՝ «Հրաչեայ սա կոչի... որ է երբայիքից ամբողջ պարբերութիւնը մտցնել Պարոյրեան ցանկի մէջ Հրաչեայ անուան տակը

արքայ բարելացւոց որ գերեաց զհրեայս ևւ սորա ասեն (ոչ Մարտ-
րաս) զի ի գլխաւորաց Երբայեցւոցն գերելոց խնդրեալ ի Նարուգողոն-
սորայ Շամբամթ անունն ածեալ բնակեցոց մեծաւ պատուով և ի սմանէ
ասէ պատմագիրն (Մարարաս) լինել զազգն Բագրատունի և Հաւաս-
տի է ։ Ասել է թէ՝ Մարարասի մէջ կար աւանդութիւն Բագրատունինե-
րի հրէական ծագման մասին։

Ա. գիրք գլ. 23. Այս գլխի բովանդակութիւնն էլ առնուած է Հայ-
կական վեպից ։ Եղի վէպի փշրանքները հասել են մինչև մեր օրերը Սա-
սունցի Դաւիթ անուան տակ ։ Այստեղ պատմումէ Սևներիմի հայ-
րասագան և ապստամբ որդիների փախուստը գէպի Հայաստան իրենց մայ-
րենի երկիրը (ըստ մեզ հասած վէպի ասութեան)։ Այս փախուստա-
կան արքայորդիներից ծագեցան Երծրաւնիներն ու Գնունիները ։ Ահա այս
ծագման մասին վկայութիւն է բերուած Մարարասից ։ Դսկ Արգամնզանն
յարեւելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ ի սմանէ ասէ պատ-
մագիրն (Մարարաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս։

Մի այսպիսի վկայութիւն կայ նաև Անգեղ տան մասին ։ Բայց զԱն-
գեղ տունն ասէ նոյն պատմագիրն (Մարարաս), ի Պատրամայ ու-
մեմնէ ի Հայկակայ թռոնէ լինել ։

Սրանից յետոյ այլ ևս բնաւ չենք հանդիպում Խորենացու Ա. գլուխում
Մարարասի յիշատակութեանը, կամ նրանից արուած որևէ քաղուածքի ։
Այսուամենայնիւ շարունակենք համառօտել Խորենացին։

Ա. գիրք գլ. 24. Այս գլխով Խորենացին սկսումէ նոր հատուած որ
նուիրուած է Տիգրան Հայկազունուն ։ Խորենացու սովորութիւնը յայտնի
է իւրաբանչիւր նոր հատուած սկսելիս ցոյց տալ այդ հատուածին ծա-
ռայող աղբիւրները ։ Եյս մենք տեսանք Ա. գիրք 8 գլխում Մարարասի
վերաբերաւթեամբ և 19-դ գլխում ուր ընդհանուր և անորոշ աղբիւրներ
է ցոյց տալիս նա Անուշաւանեան և Պարոյրեան ցանկի նահապետների ու
թագաւորների պատմութեան համար ։ Նոյն սովորութեանը հաւատարիմէ
մնում Խորենացին իւր ամբողջ պատմութեան ընթացքում ։ Դեռ Գուտըշ-
միգն էր նկատել թէ՝ Moses gibt immer sehr genau an, wo eine neue Ge-

անմիջապէս Այսպիսով «Քանզի եւ վերջին Երտանգս» պարբերութիւնը կմնաց 22-դ
գլխի բոլորովին վերջում ինչպէս որ խալապէս էլ պէտք է լինի ։ Խորենացու Ա. գիրք
19-դ գլխում այս երկու պարբերութիւն—ծանօթութեանց բոլորովին նման ունինք մենք
չըրս ծանօթութիւն վերաբերեալ Յեսուսի Արայի Հայկակի եւ Զարմայրի անուններին.
որոնք ձեռագրերի մէջ բնադրից դուրս են դրում առանձին աստղանիշերով ։ Եւ որտեղ
վերջին հրատարակութեան մէջ զ ետեղուել են բնադրում ։ Այս մեր աւաճարկաժ
տեղափոխութեանը էլի առիթ կոնհնանք վերադառնողու.

schichtsquelle eintritt, und ebenso genau die Residenzwechsel der armenischen Könige. (Եր. 16):

Այս 24-րդ գլուխն էլ այդպիսի մի հատուածի սկզբնաւորութիւն է, ուր ցցց է արուելու նոր աղբիւր: Աւշի ուշով կարգալով այս պերճարան գլուխը՝ հանգիպում ենք միմիայն մի աղբիւրի յիշատակութեան: — զորմէ (զՏիգրանայ) ասէին ի հին ս մեր: ո ր.ք բա մը ռա մը ռա մը ն եր: գ է ի ն: լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր: մեծիմաստն և պերճարան, ևայլն: Ահա Խորենացու յառաջ բերած մրակ աղբիւրը Տիգրանի պատմութեան համար: Յայտնի է Խորենացու այն ջանքը: որով տքնումէ նա այսպէս կամ այնպէս իւր պատմածը վաւերացնել անպատճառ մի որեւ գրաւոր աղբիւրի վկայ ու թե ա մը: և եթէ այդ հնարաւոր է՝ յունական աղբիւրի վիայութեամբ: Մինչեւ անդամ ասորական կամ քաղդէական գրուածները որոնք յունարէն են թարգմանուած: Խորենացին համարում է յու ն ա կ ա ն աղբիւր պատճառարաւնելով այսպէս՝ «սակայն մեք Յունաց համարիմք, որպէս ի նոցանէ ուսեալ» (Ա. 5): Աւստի և Տիգրանի պատմութեան համար եթէ նա որեւ գրաւոր աղբիւր ունենար: անհնարին էր որ լուեր, բաւականանալով «բամբուամի» երգող վիպասանների վկայութեամբ:

Ա. գիրք, գլ. 25, 26, 27, 28, 29, 30: Այս գլուխների մէջ Տիգրանի և Աժդահակի պատմութիւնն է ամփոփուած: «Նախընթաց զլիսում արդէն տեսանք իրեւ աղբիւր վիպասանների երգը, այդ նոյնը ձշմարտում է և այս զլուխներում: Երեսում է որ վիպասանների երգը Աժդահակի պատմութեան հետ կից շարայրում էր և նրա սերնդեան՝ Արշապազունների զրոյցները: Խսկապէս մենք տեսնում ենք Տիգրանի և Աժդահակի հետ հանգէս գուրս գալիս և Արշակունի Երտաշիսին և Սաթենկանը կամ Սաթինկանը: և Արդամ—Երդաւանին և Երտաւազդին: Այս բոլորը ամբողջովին առնուած են վիպասանական երգից, նաև թուելեաց երգերից: Այս գլուխներում պատահում էն այսպիսի ասացուածներ: օրինակաւս այսուիկ՝ որ պատմէն (25): «Էր, ասէ, յաւուրն յայնս ոչ սակաւ ինչ վտանգ» (26): «Զինի այսորիկ ասէ, թէ ի հաստատել Աշդահակայ զՏիգրանաւհի ի տիկնութիւն» (29), «Պատմի և այս» (30): «Յ այ տն են զայս ձշմարտապէս և թուելեացն երգը, զոր պահեցին ախորժելով որպէս լսեմ: մարդիկ կողմանն զինաւէտ գաւառին Վողթան:» Այլ և

¹⁾ Վենետիկան վերջին տպագրում աւելացրած է մի «ասէ»: — օրինակաւս այսուիկ ասէ որ պատմէն: Այս «ասէ» բառը պակասում է նախկին տպագրերում: ձռապգրերում նաև Ամիգլուի ձեռագրում: եւ մեր գիտնակով կայ միայն Լամբրոնացու կոչուած (Կարինեանի) օրինակում: Մեր կարծիքով՝ այդ «ասէն» բոլորովին ուելորդ է:

Ճաշ ասեն՝ գործեալ (տպ. գործել) Արդաւանայ ի պատիւ Արտաշիսի և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց»։ Եյլ և Արտաւազգայ ոչ գտեալ ասեն... տեղի ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու, նա անց, ասէ գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» (30)։ Պէտք է նախապէս նկատել, որ այս բոլոր զլուխներում Խորենացին պատմումէ իւր ըստնից, պատմումը ինքն է, դատողութիւններ է անում; Համառօտումէ, յաւելուածներ է անում և այլն, և այլն։ Միայն տեղ տեղ նա խօսքը թողնումէ վիպասանութեան կամ թուելեաց երգերին կամ անորոշ որ պատմումէ, կամ ասումէ կամ ասեն ասում են։ Ովէ այդ ասողը՝ պատմողը—մենք պատասխանում ենք՝ երգը, վիպասանութիւնը, զրոյցը, Թուելեաց երգերը, և ոչ մի գէպքում Մարարաս։ Ստկայն Գարագաշեան ուրիշ տեսակ է հասկանում։ Նա երկու տեղ աւելացնումէ Մարարաս անունը։ «Էր, ասէ (Մարարաս) յաւուրսն յայնս, «Զինի այսորիկ ասէ (Մարարաս)։ Ի՞նչ հիման վրայ, ի՞նչ պատճառով, մենք բնաւ չենք կարողանում հասկանալ։ Մենք խօսուխանում ենք, որ փոքր ինչ տարօրինակ է ասէ։ անորոշ ասացուածը առանց անուանը բայի, բոյց ինչու անպատճառ ենթադրել թէ այդ ասողը Մարարասն է։ Կամ թէ ինչու մի «Մարարաս» էլ չէ աւելացրել Գարագաշեանը։ Նա անց, ասէ, գնաց և շինեաց։ ի մէջ։ Փաստ է, որ Մարարասի անունը ամենեին չկայ այս գլուխներում, բայց նախառեալ կարծիքը այնչափ զօրեղ է, որ մի տեղ Գարագաշեան մինչև անդամ Խորենացու փոխանակ դնումէ Մարարասի անունը, ահա այդ օրինակը, Խորենացին յառաջ րերելով Աժգահակի նամակի պատճէնը աւելացնումէ իւր կողմից։ Եւ առանց յերկարելոյ զբանս ասացից։ Գայ առաքեալն և կատարէ յաղաքս օրիորդին գեղեցկի։ Գարագաշեանը թարգմանումէ՝ «Զերկարեմ խօսք, ասէ Մարիբաս (?!), պատգամաւորը կու գայ և կը կատարէ գործը և այլն» (եր. 120)։ Ո՞րտեղից է և ինչու է Մարարասն այստեղ խցկուել մինչդեռ բոլոր այս զլուխներում։ ինչպէս արդէն նկատեցինք, պատմութիւնը կատարուումէ Խորենացու բերանից։

Ա. Գիրք գլ. 31, 32։ Եյս վերջին երկու զլուխում Խորենացին շարունակումէ իւր կողմից պատմել։ երբեմն խօսքը տալով առասպելին, «զորմէ ասեն առասպելք», երբեմն երգին՝ ընդ վիշապաց ասէ ին յերգն կռուել նմա և յաղթել։ և կարի իմն նմանագոյնս զներակլեայ նահատակութեանցն նմա երգէ ին։ Եյլ ասէ ին զսա և աստօւածացեալ։ և անգրի (տպ. անդ) յաշխարհին Վրաց զորա չափ հասակի կանգնեալ։ Երբեմն էլ իւր անձնական վկայութիւնն է մէջ բերում։ Զայս երգելով ոմանց բամբուամի լուաք իսկ ականչօք մերովք։

կամ՝ թէ՝ «Ոչինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ»։ Մի անդամ էլ Տրովագական պատերազմի առթով յիշում է Հոմերոսին։ Մարարասի հոտն անդամ՝ չկայ։

Պարսից առասպելների երկու գլուխը արդէն ոչ ոք Մարարասից առնուած չէ համարում անցնինք ուրեմն Բ. գրքին։

Կարճ կապելու համար ասենք, որ Բ. գրքի առաջին իննը գլուխները, որ Ենթարկում են մեր հետախուզութեանը, բոլորն էլ ամբողջովին գրուած են Խորենացու բերանից։ Պատմազն է ինքը Խորենացին ծայրէ ծայր։ Կայշում է տեղ տեղ առասպելներ, հին զրոյցներ, օրինակ՝ Հագամակերտի։ Տորքի։ Ալաքի վերաբերութեամբ, տեղ տեղ իւր սեպհական դատողութիւններն ու կարծիքները, ժամանակակից և տեղագրական հանօմութիւններ, նաև իւր տատամութիւնները, օրինակ՝ ամբողջ 7 և 8 գլուխները նախարարութեանց վերաբերութեամբ։ Աերջապէս մի տեղ յիշում է Հերոդոտոսին (գլ. 2), մէկ տեղ՝ Սուրբ Գիրքը (գլ. 1.), մի այլ տեղ Արփեգենոսին (գլ. 8) և հուսկ ուրեմն։ իններորդ գլուխ վերջում Մարարասին այսպէս։ «Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Երաս Կատինայ»։ Այս բոլորից հետեւում է որ այդ ինն գլուխները, ինչպէս և Խորենացու առաջին ամբողջ գիրքն էր։ Խորենացու բառով առած՝ «հաւաքումն են»։ Բայց անշուշտ այս իննը գլուխներում շատ բան կայ Մարարասից առնուած, բայց ոչ բոլորը։

Մարարասի իրրե թէ Կինուէից բերած գիրքը, որից և քաղուածքներ արձանագրուեցան Մծրինում, կարող էր հասնել մինչև Աղեքսանդր Մակեդոնացի, որովհետեւ իրրե թէ վերչինիս հրամանով էր թարգմանուել քաղեարէնից յունարէն։ Բայց մենք Ա. գիրք 8 գլուխում տեսանք, որ Խորենացու ունեցած Մարարասում կային և տեղեկութիւններ Պարթևաց թագաւորութեան սկզբնաւորութեան մասին, իսկ այս Բ. գիրք 9 գլուխց կարող ենք հետեւցնել որ Մարարասի այդ տեղեկութիւնները հասնում էին մինչև Աաղարշակի որդի Արշակը։

Եղրակաց օւթիւն։ Այժմս տեսնենք ինչ չափով է ներկայանում մեղ Մարարասը, ըստ Խորենացու վկայում կար Հայկից և Բէլից սկսած մինչև Արայ—Շամիրամի պատմութիւնը, առնուած (իրրե թէ) արձանի վրայ գրոշմուած հատուածից։ Համ բաներ առնուած էին վեպից, որ չկային Մարարասի մէջ, ինչպէս օրինակ Շամիրամի մահը, Ա.ան քաղաքի շինութիւնը, Խօսիների պաշտամունքը և այլն։ Այնպէս որ կարելի է ասել, որ Խորենացու բուն աղբիւրը վեպն էր և Մարարասի վկայութիւնը՝ միայն գրաւոր աղբիւրից առած վաւերացումն։ Մարարասի մէջ կար նաև յիշատակութիւն Բագրատունիների, Արծրունիների և Ան-

գեղ տան ծագման մասին։ Վերջապէս Մարաբասի գրքում կար մի յաւելուած։ որտեղ պատմում էր այդ գրքի ծագման մասին, որ կապուած էր պարթև Արշակ մեծի և Վաղարշակ՝ Հայոց թագաւորի հետ։ Վերջապէս՝ Պարթևների մասին եղած տեղեկութիւնները հանում էին Մարաբասի մէջ մինչև Վաղարշակի որդի Արշակի թագաւորութեան վերջը։ Ահա Խորենացու ունեցած ամբողջ Մարաբասը, — մի քանի երես բան։ Բոլորվին ուրիշ ազրիւրներից էին Պարսյրի բազմաթիւ նախորդների և յաջորդների։ Տիգրանի և Աժգահակի, Տիգրանի յաջորդների պատմութիւնը, որ և բանում է Խորենացու Ա. գրքի մեծագոյն մասը։ Բ. գրքի ինն գլուխներից էլ Պարթևների թագաւորութեան վերաբերեալ գլխաւոր գծերը մի կողմ դրած, որ Մարաբասիցն են, մնացեալ բազմաթիւ մանրամասնութիւնները։ մանաւանդ նախարարական տների ծագման վերաբերեալ դլուխները առնուած են ոչ Մարաբասից։ Կյսպիսով մենք հանում ենք այն եղբակացութեանը, որ մինչև այժմն Մարաբասին վերադրուածից հազիւ $\frac{1}{5}$ մասն է Մարաբասից առնուած, իսկ $\frac{2}{5}$ -ը Մարաբասինը չէ։

Այս երկար, բայց անհրաժեշտ նախապատրաստութիւնից յետոյ, առաջիկայ յօդուածում, մենք կանցնենք վերջապէս քննադատների Խորենացուն վերագրած հակասութիւններին։ Մարաբասի առթով։ Այդ յօդուածում կը տեսնենք նաև թէ ինչ նոր հետեւ անքներ են բենքին ու մասն մեր Մարաբասեան տեսութիւնից։

ՄԻԱԲԱՆ